Հ Ր Ա Մ Ա Ն N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«04» ՓԵՏՐՎԱՐԻ 2015 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2015 թվականի փետրվարի 4-ի N 38-Ա հրամանը և **Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը.**

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի աշխատողների կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները պահպանելու նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանին:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Գևորգյանին՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ներկայացնել տեղեկատվություն նախարարության աշխատողների կողմից տվյալ ամսվա ընթացքում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները» պահպանելու նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունքների մասին.

2) աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողների նկատմամբ կիրառվելիք կարգապահական տույժի ընտրության վերաբերյալ առաջարկությունները նախապես ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին:

3. Սույն հրամանի 2-րդ կետում նշված տեղեկությունները և առաջարկությունները տրամադրել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդական Դավիթ Ղուլյանին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ